

ՍԱՍՆԱ ԾՌԵՐ. Ի. Դ, Նոր պատումների գրառումը և բնագրի պատրաստումը՝ Սարգիս Հարությունյանի և Արուսյակ Սահակյանի, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 1999, 582 էջ:

«Սասնա Ծռերի» ներկա Դ Հատորն ամբողջապես ընդգրկում է Հայկական Հերոսավեպի՝ Սասնա պատումների մի ընտիր մասը, թվով 17 պատում՝ մեծ մասամբ գրառված Հատորը կազմողների՝ բանասիրական գիտությունների գոկտոր Սարգիս Հարությունյանի և բանասիրական գիտությունների թեկնածու Արուսյակ Սահակյանի կողմից: Հատորում տեղ գտած պատումների գրառումներն ընդգրկում են ժամանակային երեք շերտ՝ 1920-ական, 1930-ական և 1970-ական թթ.: 1920-1930-ական թթ. գրառումներն իրականացրել են Սենեքերիմ Տեր-Հակոբյանը և Հարություն Ավչյանը, իսկ 1970-ական թթ.՝ Սարգիս Հարությունյանը և Արուսյակ Սահակյանը: Ի տարբերություն վաղ շրջանի, 1970-ական թթ. գրառումները որոշակի նպատակաուղղվածություն են ունեցել: 1971 թ. ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի կազմակերպած արշավախումբը (Սարգիս Հարությունյանի գլխավորությամբ) էպոսի Հայտնաբերման և Հրատարակման 100-ամյա Հոբելյանի կապակցությամբ որոշեց նախորդ գրառողների հետքերով դնալ արևմտահայերով վերաբնակված շրջաններ և պարզել վեպի կենցաղավարման մակարդակն ու ժամանակի անգրագարձը վեպի բանավոր գոյատևման վրա: Վեպի Հայտնաբերված բազմաթիվ պատումներ դասակարգելով ըստ ազգագրական բարբառային հատկանիշների՝ Սարգիս Հարությունյանը և Արուսյակ Սահակյանը սկզբում իրենց գրառած տիպաբանական երկու հիմնախմբի՝ Մշո և Մոկսի սյատումներն ամփոփեցին 1971 թ. Հրատարակված «Սասնա Ծռերի» նախորդ, Գ Հատորում: Եթե Մշո և Մոկսի առանձին պատումների

նմուշներ ժամանակին Գ. Սրվանձտյանցի, Հ. Համամճյանի, Տ. Զիթունու, Հ. Գիլանյանի, Ս. Հայկունու կողմից գրառվել էին բնաշխարհում Մուշում և Մոկսում ու Հարակից շրջաններում, ապա վեպի Հայրենիքում Սասունում, առ այսօր որևէ պատում գրառված չէ: 1930-ական թթ. Կ. Մելիք-Օհանջանյանի կողմից Թալինի շրջանում վերաբնակված սասունցի վիպասացներից գրառված վեպի երկու պատում հրատարակվել են 1944 թ. «Սասնա Ծռեր» համահավաքի 2-րդ գրքում, և 1977 թ. երեք պատում գարձյալ գրառված ինքնուրույն Հայաստանում, Գր. Գրիգորյանի «Սասունցի Դավիթ» ժողովածուում:

1970-ական թթ. սկզբներին վերոհիշյալ գիտարշավի արդյունքների մեջ զգալի տեղ կազմեցին Սասնա նորահայտ պատումները՝ թվով 21, գրառված Թալինի, Աշտարակի, Էջմիածնի և այլ շրջաններում վերաբնակված նախկին սասունցիներից: 21 վիպասացից 18-ը տղամարդ է, 3-ը՝ կին, բոլորն էլ ծնված Սասունում: Նրանցից ոմանք վեպը լսել են բնաշխարհում, ոմանք էլ գաղթից հետո վերաբնակված գյուղերում սասունցի վիպասացներից:

Նկատի ունենալով վեպի բուն Հայրենիքից՝ Սասունից ցարդ հրատարակված պատումների սակավությունը, վերոհիշյալ Հատորը կազմողները նպատակահարմար են դտել մեկ առանձին գրքում ամփոփել Սասնա այն բոլոր անտիպ պատումները, որոնք գրառվել են տարբեր ժամանակներում, տարբեր բանահավաքների կողմից:

Ներկա Դ Հատորը նախորդ հրատարակություններից տարբերվում է նրանով, որ առաջին անգամ Սասնա պատումների մի ստվար մաս, ամփոփվելով առանձին Հատորում բնագրային ինքնատիպությամբ

յամբ մի նոր էջ է լրացնում հերոսավեպի գրառման ու հրատարակման պատմության մեջ՝ հնարավորություն ընձեռելով պատումների ծագման հայրենիք և գրառման վայր փոխհարաբերությունների վերլուծությունում ու հետազոտմամբ որոշարկել Սասնա պատումների տեղն ու դերը պատումների ընդհանուր համակարգում: Հրատարակված բնագրերը բացառիկ կարևորություն են ներկայացնում վեպի անցած ուղին ժամանակի ու տարածության մեջ ճիշտ գնահատելու և լուսաբանելու գործում:

Բնագրերին ծանոթանալիս առաջին իսկ հայացքից զգացվում է ժամանակի ու տարածության կատարած խաթարիչ դերը: Բանավոր փոխանցման ճանապարհին դրանք կրել են բազմաբնույթ կորուստներ. խախտվել է ճյուղային համամասնությունը, իշխում է սեղմ, հակիրճ, կարճառոտ պատմելիք: Այլ կերպ չէր էլ կարող լինել. դա բանահյուսության գոյակերպն է: Ձնայած աղճատումներին, բնագրերում պահպանվել են վեպի բուն էությունը կազմող վիպական դյուցազնական ոգին, հայրենական արթունքներն աչքի լուսիս պես պահպանելու վերաբերյալ էպոսում հնչած հիմնական գաղափարները: Պահպանված է էպոսին բնորոշ վիպաքնարական շունչը, յուրաքանչյուր տողի մեջ երևում է խոսքի վարպետն իր հայրենի բարբառի ու բնաշխարհի անթերի իմացությունը: Դարեր են անցել էպոսի ստեղծման ժամանակաշրջանից, սակայն այսօր էլ սասունցու հոգեբանության մեջ վիպականն ու իրականն իրարից չեն անջատվել, և վիպասացների պատկերացումներում Սասնա պատմությունն սկսվում ու ավարտվում է «Սասնա Ծոռիով»: Ահա թե ինչու վիպասացը, վեպին սերտորեն աղերսվող հարակից զրույցներից մեկում, արտահայտում է իր հայրենի լեռնաշխարհին ձուլված սասունցու հոգում մխացող կարոտը այսպիսի տողերով.

Սասնա մարգ իրավունք չունի էրթա
Ուրիշ մի տեղ տուն չիսի:

Այս տողերը, որով սասունցին հակադրվում է անարդար իրականությանը,

չեն կորցրել իրենց հնչեղությունը և այսօր իբրև պատգամ են հնչում չայաստանի նույն տեղավայրերում վերաբնակված, բռնագաղթված հայության մի այլ հոծ զանգվածի համար:

Այս ամենի խորը գիտակցմամբ Սարգիս Հարությունյանը Գ Հատորում գետեղված վերոհիշյալ հատվածն ամբողջությամբ դարձյալ հնչեցնում է Դ Հատորի իր իսկ կողմից գրված առաջաբանում տողատակում նշելով. «Այս էր սասունցիների դարերով փայփայած հոգեբանությունը. սասունցի մարդն իրավունք չունի թողնել իր հայրենիքը՝ գնալ օտար աշխարհում բնակվել»:

Հատորում ներկայացված պատումները բնագրագիտական սկզբունքների կիրառմամբ միատարր չեն: Վաղ շրջանի գրառումներում (1920-1930-ական թթ.) պատումների կենցաղավարման, գրառման հանգամանքների մասին տվյալներ չեն հաղորդվում, բացառիկ զեպերում Հարություն Ավչյանի կողմից գրառված պատումներին կից տրվում են վիպասացի մասին կենսագրական թուղթիկ տվյալներ: Նման մոտեցումը պետք է բացատրել գրառողների անփութությամբ: Տվյալ ժամանակաշրջանում վերոհիշյալ սկզբունքների կարևորության գիտակցումը դեռևս լիովին հստակեցված չէր: Սարգիս Հարությունյանը և Արուսյակ Սահակյանը գիտական որոշակի սկզբունքների կիրառմամբ, վիպասացների հետ կենդանի շփման ընթացքում, դիտարկումներով վեր են հանել էպոսի կենցաղավարման հետ կապված այնպիսի մանրամասներ, որոնք իրենց սկզբնազբյուրային կարևորությունը նպաստում են վեպի բազմաբնույթ կողմերի լուսաբանմանը: Յուրաքանչյուր պատումին կից ներկայացրել են տվյալ վիպասացի ստեղծագործական խառնվածքի, կատարողական արվեստի, վարպետության, պատմելաոճի յուրահատկությունները բացահայտող տվյալներ, որոնք օգնել են գրառողներին վերհանելու վիպասացի հոգեբանության, նրա ստեղծագործական էությունը բնորոշ գծերը, համոզվել, որ նրանք վեպը բանավոր հիշողությամբ բառացի սերտած սովորական մարդիկ չեն, այլ նրանցից յուրաքանչյուրը, առան-

ծին-առանձին, վիպասանական տաղանդի յուրահատկություններով, իր ժողովրդի պատմության իմացությունը օժտված, վեպը ստեղծագործաբար յուրացրած անհատ է, ժողովրդի ոգու վեհությունն ու Հերոսական կամքն արտահայտող իսկական դյուցադներգակ:

Որոշ պատումների կցված բանահավաք-բանասաց հարցուպատասխանները առաջին հայացքից թվում են բանասացի պատմելու ընթացքը շեղող միջամտություն: Իրականում կատարված է բնագրագիտական հետաքրքիր աշխատանք:

Փրառողները կենդանի երկխոսությունը, տեղում ճշտում են վեպի մասին վիպասացի տեղյակության մակարդակը հատկապես այն պայմաններում, երբ նրա պատումում որոշակիորեն խախտված է ճյուղային համամասնությունը՝ Սույն հատորը մի առանձնահատկությամբ ևս տարբերվում է նախորդներից: Կազմողների կողմից Սասնա պատումների շուրջ կատարված են բազմաբնույթ, համալիր ուսումնասիրություններ: Սարգիս Հարությունյանի ներկայացրած առաջաբանն աչքի է ընկնում Սասունի մասին պատմաաշխարհագրական, տեղագրական, նրա քաղաքական կյանքի շրջափուլերի վերաբերյալ բազմահարուստ տվյալների ընդգրկմամբ ու Հետազոտական վերլուծություններով: Նամանրագնին քննում է վեպի գրառման պատմությունը, պատումների կենցաղավարման մակարդակը, դրանց փոխանցման ուղիները, ժամանակի ու տարածության մեջ կրած փոփոխությունները, ժամանակին վեպի հայրենիքից՝ Սասնա բնաշխարհից պատումների չգրառվելու օրյեկտիվ պատճառներն ու վեպի Հետ կապված բազմաբնույթ խնդիրներ:

Սասնա պատումների համեմատական քննությունը ներկայացված է Արուսյակ Սահակյանի կողմից: Քննության նպատակով Հետազոտողը համեմատության ոլորտ է ընդգրկել տարբեր ժամանակներում, տարբեր բանահավաքների կողմից գրառված վեպի 22 պատում:

Հատորում տեղ են գտել նաև պատումների ներքին բովանդակությունը բացահայտող բազմաբնույթ, օժանդակ աղբյուրներ:

Սարգիս Հարությունյանի կազմած մեծաքանակ ծանոթագրություններում ընդգրկված են ներկա և նախորդ հատորներում հանդիպող վիպական տեղավայրերի, սրբավայրերի, անձնանունների մասին տվյալներ, որոնք լուսաբանված են մշակութաբանական լայն տեսադաշտի վրա: Մոտիվների համացույցը կազմված Աֆուսյակ Սահակյանի կողմից, ճշգրտում է պատումների մոտիվային առանձնահատկությունները յուրաքանչյուր ճյուղի սահմանների շրջանակներում: Հատորն ունի (դարձյալ Ա. Սահակյանի կազմած) պատումներում հանդիպող բարբառային դժվարմբներ լե օտարամուտ, դարձվածաբանական բառարաններ. պատումների հարացուցային ցանկում տրված են յուրաքանչյուր պատումի թվահամարը, վերնագիրը, տողերի քանակը, գրառման և ծագման վայրերը, ժամանակը, դրառողը, վիպասացը, ձեռագիր-բնագրի հասցեն: Վիպասացների հատուկ անունների այբբենական ցանկում ընդգրկված են պատումներում հանդիպող անձնանունների, տեղանունների, կենդանիների, առասպելավիպական էակների, զենք ու զրահի, զգեստ-տարազի անվանումները: Հատորում զետեղված է Սասունի սինեմատիկ քարտեզը, ուր նշված են «Սասնա Ծոփերի» պատումների ծագման վայրերը: Հատորում տեղ են գտել վիպասացների լուսանկարները: Այն իր ամբողջության մեջ ընթերցողին հաղորդակից է դարձնում Սասնա աշխարհի բուն էությունը:

Հատորն իր ինքնատիպ ներքին կառուցվածքով, բնագրերով, հետազոտական քննություններով կարևոր ներդրում է մշակույթի, հատկապես էպոսագիտության բնագավառում:

Խորհրդանշական է, որ Հատորի հրատարակությունն իրականացվել է ծագումով սասունցի, ամերիկահայ բարերար, Հայ մշակույթի երախտավոր Հարություն Սիմոնյանի հովանավորությամբ:

ՍՎԵՏԼԱՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ